ՀԿԴ/0275/01/23
(ՇԴ/0254/01/23)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18 դեկտեմբերի 2023 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով թիվ ՀԿԴ/0275/01/23 (ՇԴ/0254/01/23) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի հոկտեմբերի 19-ին Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Կարինե Հակոբի Ավդալյանի վերաբերյալ երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և Աշոտ Շմավոնի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով և 46-256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով թիվ 68158218 (ՇԴ/0254/01/23) քրեական վարույթը:

1.1. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, 2023 թվականի հոկտեմբերի 23-ին որոշում է կայացրել թիվ ԾԴ/0254/01/23 քրեական վարույթը ստանձնելու և 2023 թվականի նոյեմբերի 6-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի նոյեմբերի 28-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

2. Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի դեկտեմբերի 7-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0275/01/23 (ԾԴ/0254/01/23) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի դեկտեմբերի 12-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. 2023 թվականի սեպտեմբերի 29-ին Կարինե Հակոբի Ավդալյանի նկատմամբ երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա 2012-2018 թվականներն ընկած ժամանակահատվածում, հանդիսանալով «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի Գյումրու մասնաճյուղի տնօրենը և 2003 թվականին նշված ՊՈԱԿ-ի հաստատված կանոնադրությամբ լիազորված լինելով կազմակերպել մասնաճյուղի գործունեությունը և դրա համար կրել պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով, գործել մասնաճյուղի անունից, ներկայացնել նրա շահերը, արձակել հրամաններ, որոնց կատարումը պարտադիր է մասնաճյուղի սովորողների և աշխատողների համար, ապահովել կոնսերվատորիայի և մասնաճյուղի խորհուրդի որոշումների*

կատարումը, կազմակերպել մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը, ապահովելով ներդաշնակ գործունեությունը, հրավիրել մասնաճյուղի ուսումնական խորհրդի, տնօրինության նիստեր և ապահովել այդ մարմինների սերտ համագործակցությունը, կոնսերվատորիայի լիազորությամբ, կոնսերվատորիայի անունից կնքել պայմանագրեր, բանկերում բացել հաշիվներ, կոնսերվատորիայի ռեկտորի համաձայնությամբ մասնաճյուղի ֆինանսական միջոցների շրջանակներում սահմանել աշխատավարձի և հավելավճարի չափերը, ՀՀ օրենսդրությանը համապատասխան լուծում աշխատողների և սովորողների պարգևատրման և ֆինանսական օգնության հետ կապված հարցերը, կոնսերվատորիայի ռեկտորին ներկայացնել մասնաճյուղի ուսանողների ազատման, վերականգնման, տեղափոխության, համապատասխան արձակուրդ տրամադրելու առկա, հետագա ուսուցման և որակավորման ատիճանների շնորհման վերաբերյալ առաջարկություններ, իրականացնել մասնաճյուղի ֆունկցիոնալ գործունեությունից բխող և ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ, պատասխանատվություն կրել մասնաճյուղին հատկացված շարժական և անշարժ գույքի պահպանման համար, միաժամանակ «Վերածնունդ միջազգային մրցույթ փառատոն» հասարակական կազմակերպության և «Իմպրոհիթմ» մշակութային հասարակական կազմակերպության նախագահը 27.12.2001 թվականից մինչև 04.02.2017 թվականն ընկած ժամանակահատվածում գործած «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության հաստատված կանոնադրությամբ լիազորված լինելով ղեկավարել հասարակական կազմակերպության խորհրդի աշխատանքները, ներկայացնել կազմակերպությունն առանց լիազորագրի, իրականացնել կազմակերպության ողջ գործադիր ղեկավարումը, արձակել հրամաններ, տալ լիազորագրեր, օրենքով սահմանված կարգով կնքել գործարքներ, ստորագրել պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացել բանկային հաշիվներ, ձեռք բերել, տիրապետել, օգտագործել, տնօրինել, օտարել և դուրս գրել կազմակերպության՝ մինչև մեկ միլիոն դրամ արժողության գույքը՝ ցանկացած չափի և քանակի, չունենալով հասարակական կազմակերպության սեփականության

նկատմամբ բաժնային իրավունք և պարտավոր լինելով կազմակերպության միջոցները օգտագործել միայն կազմակերպության անդամների և կանոնադրությամբ սահմանված նպատակների ու խնդիրների համար, իրեն վստահված առանձնապես խոշոր չափերի գույքը հափշտակելու միտումնական դիտավորությամբ խախտել է «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի Գյումրու մասնաճյուղի ՀՀ կառավարության 07.11.2002թ. թիվ 1920-Ն որոշման 5-րդ կետի «է» ենթակետի պահանջն այն մասին, որ տրամադրված գումարները չեն դիտարկվում որպես ձեռնարկատիրական գործունեության արդյունք, քանի որ վերոնշյալ գործունեությունից ՊՈԱԿ-ը շահույթ չի ստանում, բացի այդ ՀՀ կառավարության 27.11.2003թ. թիվ 1678-Ն որոշման 2-րդ կետի «ա» ենթակետի պահանջն այն մասին, որ պետական ոչ առևտրային կազմակերպությունները չեն կարող վերցնել և տրամադրել վարկեր կամ փոխառություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության 24.12.2003թ. թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման» կարգի 4-րդ կետի՝ դրամաշնորհը տնտեսության որևէ ճյուղի կամ գործունեության որևէ տեսակի խթանման նպատակով բյուջեից կազմակերպության կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացումն լինելու մասին պահանջը և «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի Գյումրիի մասնաճյուղի և «Վերածնունդ» միջազգային մրցույթ փառատոն» հասարակական կազմակերպության միջև 02.02.2012թ.-ին, 03.04.2013թ.-ին, 01.02.2014թ.-ին, 19.01.2015թ.-ին, 12.01.2016թ.-ին, 10.01.2017թ.-ին, 15.01.2018թ.-ին կնքել է համագործակցության պայմանագրեր, ըստ որոնց՝ «Վերածնունդ» միջազգային մրցույթ փառատոն» հասարակական կազմակերպությունը պարտավորվել է «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի Գյումրիի մասնաճյուղի հանձնարարությամբ իրականացնել պայմանագրում նշված աշխատանքները, իսկ «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի Գյումրիի մասնաճյուղը պարտավորվել է վճարել այդ աշխատանքների իրականացման համար, և ունենալով «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի

Գյումրիի մասնաճյուղից առանձնապես խոշոր չափերի իրեն վստահված գումարը հափշտակելու միասնական դիտավորություն՝ 2012-2018 թվականներն ընկած ժամանակահատվածում իրեն վստահված առանձնապես խոշոր չափերի 345.692.000 ՀՀ դրամ գումարը առանձնացրել է «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի Գյումրիի մասնաճյուղի գույքային ֆոնդից և միացրել է՝ փոխանցել «Յունիբանկ» ԲԲ ընկերության և «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերության «Վերածնունդ միջազգային մրցույթ փառատոն» հասարակական կազմակերպության և «Իմպրոոիթմ» մշակութային հասարակական կազմակերպության իր կողմից փաստացի տնօրինվող գույքային ֆոնդերին՝ բանկային հաշիվներին, մասնավորապես՝ «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի Գյումրիի մասնաճյուղից «Վերածնունդ» միջազգային մրցույթ փառատոն» հասարակական կազմակերպության «Յունիբանկ» ԲԲ ընկերության և «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերության հաշիվներին 2012 թվականին փոխանցել է 1.958.000 ՀՀ դրամ, 2013 թվականին՝ 11.700.000 ՀՀ դրամ, 2014 թվականին 9.300.000 ՀՀ դրամ, 2015 թվականին՝ 14.880.000 դրամ, 2016 թվականին՝ 16.325.000 դրամ, դրամարկղային մուրքի օրդերներով՝ 6.880.000 ՀՀ դրամ, «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերության միջոցով 2017 թվականին՝ 8.500.000 ՀՀ դրամ, 2018 թվականին՝ 16.000.000 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 199.012.000 ՀՀ դրամ գումար, իսկ «Իմպրոոիթմ» մշակութային հասարակական կազմակերպության «Յունիբանկ» ԲԲ ընկերության և «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերության հաշիվներին՝ 2016 թվականին՝ 110.690.000 ՀՀ դրամ, 10.990.000 ՀՀ դրամ, 2017 թվականին՝ 20.000.000 ՀՀ դրամ, 5.000.000 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 146.680.000 ՀՀ դրամ գումար, այսինքն՝ միասնական դիտավորությամբ ընդհանուր 345.692.000 ՀՀ դրամ գումար, որը ունենալով տիրապետելու և տնօրինելու հնարավորություն տարբեր ժամանակահատվածներում կանխիկացրել է՝ այդ կերպ հափշտակելով իրեն վստահված առանձնապես խոշոր չափերի գույքը:

Բացի այդ, Կարինե Հակոբի Ավդալյանը, հանդիսանալով «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության նախագահը՝ գործադիր մարմնի ղեկավարը, 27.12.2001 թվականից մինչև 04.02.2017 թվական ընկած ժամանակահատվածում գործած «Հասարակական

կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության հաստատված կանոնադրությամբ լիազորված լինելով ղեկավարել հասարակական կազմակերպության խորհրդի աշխատանքները, ներկայացնել կազմակերպությունն առանց լիազորագրի, իրականացնել կազմակերպության ողջ գործադիր ղեկավարումը, արձակել հրամաններ, տալ լիազորագրեր, օրենքով սահմանված կարգով կնքել գործարքներ, ստորագրել պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացել բանկային հաշիվներ, ձեռք բերել, տիրապետել, օգտագործել, տնօրինել, օտարել և դուրս գրել կազմակերպության՝ մինչև մեկ միլիոն դրամ արժողության գույքը՝ ցանկացած չափի և քանակի, չունենալով հասարակական կազմակերպության սեփականության նկատմամբ բաժնային իրավունք և պարտավոր լինելով կազմակերպության միջոցները օգտագործել միայն կազմակերպության անդամների և կանոնադրությամբ սահմանված նպատակների ու խնդիրների համար, 2015 թվականի ընթացքում Գյումրի քաղաքում անցկացվելիք «Վերածնունդ» երաժիշտ կատարողների ամենամյա միջազգային վեցերորդ մրցույթ-փառատոնի մասնակի ծախսերի կատարումն ապահովելու համար, համաձայն ներկայացված նախահաշվի, իր՝ ի դեմս «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության և «Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի» ՀԿՀ-ի միջև 27.03.2015 թվականին կնքվել է նվիրատվության պայմանագիր, համաձայն որի՝ Գյումրու քաղաքապետարանի կողմից նվիրաբերվել է 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումար, բացի այդ, նույն նպատակով, համաձայն ներկայացված նախահաշվի, իր՝ ի դեմս «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության և ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ս.Մուրադյանի միջև 27.03.2015 թվականին կնքվել է դրամաշնորհի պայմանագիր, համաձայն որի՝ ՀՀ մշակույթի նախարարության կողմից հասարակական կազմակերպությանը հատկացվել է 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումար: Դրանից հետո, Կարինե Ավդալյանը, օգտվելով հասարակական կազմակերպության նախագահը հանդիսանալու, կազմակերպության դրամական միջոցները փաստացի իր վստահությանը հանձնված լինելու և կազմակերպությանը հատկացված

դրամական միջոցներն անձամբ տնօրինելու լիազորությունից, միաանական հանցավոր մտադրությամբ, նշված գումարներից յուրացնելու եղանակով հափշտակել է խոշոր չափերի՝ 2.681.000 ՀՀ դրամ գումարը, որից հետո, իր իսկ կողմից կատարված հափշտակության հանգամանքը քողարկելու նպատակով, ուղղակի դիտավորությամբ կեղծել է իրավունք վերապահող փաստաթղթեր, մասնավորապես. 2015 թվականի ընթացքում «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության պատվերով տպագրական ծառայություններ մատուցելու դիմաց «Ա.Վ.-Կ.Ա.Ս.Կ» ՍՊ ընկերությանը վճարված գումարների վերաբերյալ «Ա.Վ.-Կ.Ա.Ս.Կ» ՍՊ ընկերության կողմից կազմված դրամարկղային մուտքի օրդերները՝ համար 19-րդ օրդերը՝ 300.000 ՀՀ դրամի չափով, համար 27-րդ օրդերը՝ 250.000 ՀՀ դրամի չափով, համար 31-րդ օրդերը՝ 300.000 ՀՀ դրամի չափով, համար 13-րդ օրդերը՝ 262.500 ՀՀ դրամի չափով, համար 23-րդ օրդերը 270.000 ՀՀ դրամի չափով, համար 9-րդ դրամարկղային մուտքի օրդերը 300.000 ՀՀ դրամի չափով, «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության պատվերով հյուրանոցային ծառայություններ մատուցելու դիմաց «Ռաֆ և Արես» ՍՊ ընկերության հետ 2015 թվականի ապրիլի 20-ին, 21-ին ընդհանուր 360.000 ՀՀ դրամ արժողությամբ հյուրանոցային ծառայություններ մատուցելու վերաբերյալ կազմված ծառայությունների մատուցման մասին հաշիվները, «Սեյրան Գևորգյան» Ա/Ձ-ի հետ 2015 թվականի մայիսի 27-ին ընդհանուր 638.500 ՀՀ դրամ արժողությամբ հյուրանոցային ծառայություններ մատուցելու վերաբերյալ կազմված ծառայությունների մատուցման մասին հաշիվները՝ որպես հասարակական կազմակերպությանը վերը նշված պայմանագրերով հատկացված դրամական միջոցների՝ պայմանագրերի մաս կազմող նախահաշվով նախատեսված նպատակային ծախս, միաժամանակ ներառել է Գյումրու քաղաքապետարանին, ՀՀ մշակույթի նախարարությունը ներկայացվելիք ֆինանսական հաշվետվության փաստաթղթերի ամփոփաթերթերում այդ կերպ կեղծ տեղեկություններ ներառել նույն՝ 2.681.000 ՀՀ դրամ գումարի չափով ծախսը Գյումրու քաղաքապետարանի և ՀՀ մշակույթի նախարարության կողմից տրամադրված դրամական միջոցներով կատարած լինելու վերաբերյալ, իր ստորագրությամբ և կազմակերպության կնիքով

հաստատել կեղծ փվյալներ պարունակող ամփոփաթերթերը և դրել շրջանառության մեջ՝ ներկայացնելով Գյումրու քաղաքապետարան և ՀՀ մշակույթի նախարարություն:

Բացի այդ, Կարինե Հակոբի Ավդալյանը, 2015 թվականին անցկացված «Վերածնունդ» երաժիշտ կատարողների ամենամյա միջազգային վեցերորդ մրցույթ-փառատոնի ժյուրիի անդամների կեցության հարցը լուծելու նպատակով ԱՊՀ հումանիտար համագործակցության միջպետական միջազգային հիմնադրամից «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպությանը փոխանցված 2.904.501,5 ՌԴ ռուբլի գումարից յուրացման եղանակով «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության փոխնախագահ Աշոտ Շմավոնի Պետրոսյանի օժանդակությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի 23.083.761 ՀՀ դրամ գումարը, մասնավորապես՝ օգտվելով հասարակական կազմակերպության նախագահը հանդիսանալու, կազմակերպության դրամական միջոցների փաստացի իր վստահությանը հանձնված լինելու և կազմակերպությանը հատկացված դրամական միջոցներն անձամբ տնօրինելու լիազորությունից, յուրացնելու եղանակով հափշտակություն կատարելու միասնական հանցավոր մտադրությամբ, իբրև հյուրանոցային ծառայություններ մատուցելու համար «Արտյում Զաքարյան» անհատ ձեռներեցին վճարվելիք գումար 3 անգամով դուրս է գրել «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության դրամական միջոցներից և յուրացնելու եղանակով հափշտակել՝ ավարտին հասցնելով իր հանցավոր մտադրությունը, իսկ իր կողմից յուրացման եղանակով հափշտակության փաստը կոծկելու մտադրությամբ կազմել և օգտագործել է կեղծ փաստաթղթեր, մասնավորապես՝ «Արտյում Զաքարյան» անհատ ձեռներեցի հետ, վերջինի կողմից առանց ծառայությունների իրական մատուցման, «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության փոխնախագահ Աշոտ Շմավոնի Պետրոսյանի օժանդակությամբ կազմել է կեղծ փվյալներ պարունակող փաստաթղթեր՝ ծառայությունների մատուցման հաշիվներ, ակտեր՝ 10.678.000 ՀՀ դրամի չափով, 7.562.000 ՀՀ դրամի չափով, 8.930.000 ՀՀ դրամի չափով ծառայություններ «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն»

հասարակական կազմակերպութ-յանը մատուցված լինելու վերաբերյալ, այդ փաստաթղթերը հաստատել իր ստորագրությամբ և կազմակերպության կնիքի դրոշմով, վերջինից ձեռք է բերել հիշատակված գումարների չափով «Արտյոմ Զաքարյան» անհատ ձեռնարեցին վճարում կատարված լինելու մասին անհատ ձեռնարեցի կողմից կազմված կեղծ փվյալներ պարունակող անդորրագրեր և հատկացած միջոցների նպատակային ծախսումը հիմնավորելու նպատակով դրել շրջանառության մեջ՝ ուղարկելով ԱՊՀ հումանիտար համագործակցության միջպետական միջազգային հիմնադրամ:

Բացի այդ, Կարինե Հակոբի Ավդալյանը, օգտվելով «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության նախագահը հանդիսանալու հանգամանքից, խարդախությամբ առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու միտանական հանցավոր մտադրությամբ Ամերիկայի Միացյալ Նահանգներում մրցույթ-փառատոնի մասնակցելու պատրվակով Ամերիկայի Միացյալ Նահանգներ մեկնելու ցանկություն հայտնած մի շարք անձանցից խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի գույք:

Այսպես.

Կարինե Հակոբի Ավդալյանը, օգտվելով «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության նախագահը հանդիսանալու, հասարակական կազմակերպության ողջ գործադիր ղեկավարումը իրականացնելու լիազորությամբ օժտված լինելու հանգամանքներից, խարդախությամբ՝ խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու միտանական հանցավոր մտադրությամբ, Ամերիկայի Միացյալ Նահանգներում մրցույթ-փառատոնի մասնակցելու համար Ամերիկայի Միացյալ Նահանգներ անձամբ կամ իրենց հարազատների մեկնելու վերաբերյալ ցանկություն հայտնած անձանց անձամբ, իսկ ոմանց դեպքում նրանց մեկնելու համար դիմած անձնաց միջոցով վերջիններին հավաստիացրել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու-Յորք քաղաքում տեղի ունենալիք մրցույթ-փառատոնին մասնակցելու կամ այդ պատրվակով Ամերիկայի Միացյալ Նահանգներ մեկնելու հնարավորության մասին, վերջինների՝ վստահությունը ձեռք բերելու նպատակով, «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն»

հասարակական կազմակերպության անունից հանդես գալով, ապագայում ապաավող իրադարձությունների կապակցությամբ այդ անձանց դիտավորությամբ մոլորության մեջ գցելով նրանց հետ կնքել է պայմանագրեր՝ պարտավորվելով նրանց որպես արվեստագետներ ուղարկել արտերկիր՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու-Յորք քաղաքում կայանալիք սեմինարին մասնակցելու համար՝ ունենալով ստանձնած պարտավորությունը չկատարելու նախնական դիտավորություն, և հանցավոր մտադրությունն իրականացնելու դիտավորությամբ պահանջել է նրանցից «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲ ընկերությունում բացված «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության հաշվին փոխանցել 1300 ԱՄՆ դոլարից մինչև 1500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարներ և 2019 թվականի մայիս ամսից հոկտեմբեր ամիսն ներառյալ ընկած ժամանակահատվածում, ավարտին հասցնելով իր հանցավոր դիտավորությունը հափշտակել է Միդա Միքայելի Օհանջանյանի, Ալլա Ամելի Արմենի Սահակյանի, Ամիրան Բենիամինի Բաբայանի, Անահիտ Հունանի Մահմուդիի, Անգինե Արայի Իսանյանի, Անդրանիկ Գնելի Ազարյանի, Անիտա Արեգի Բայանդուրի, Արարատ Հակոբի Բաբաջանյանի, Արգիշտի Արարատի Ոսկանյանի, Արևիկ Հարությունի Քարագյուլյանի, Արմեն Յուրիի Գաբրիելյանի, Արմենուհի Արմենի Ոսկանյանի, Արմինե Այդինի Ավագյանի, Արտասևան Կեորկի Ղազելյանի, Բաբկեն Լևոնի Կարապետյանի, Գայանե Միքայելի Բախտամյանի, Գայանե Ռոբերտի Հայրապետյանի, Գայանե Վոլոդյայի Մարաբյանի, Գարեգին Արամի Յավրումյանի, Գևորգ Գեղամի Ճրկայանի, Գոհար Արկադիի Կարապետյանի, Գրիգորի Ռաշիդի Սահակյանի, Դավիթ Արսենի Սարգսյանի, Էլի Նրսեսի Թանաշյանի, Էլինա Ալիկի Գալստյանի, Էմմա Սամվելի Առաքելյանի, Թամարա Գագիկի Նազարյանի, Թամարա Վոլոդյայի Սարգսյանի, Թորոս Ափրահամի Դերվիշյանի, Լաուրա Արթուրի Պողոսյանի, Լարա Ռուդիկի Սարգսյանի, Լիանա Արարատի Գրիգորյանի, Լիդա Ղազարի Քեշիշյանի, Լիլիա Վիտալիի Սաֆարյանի, Լիլիթ Ղուկասի Սրեփանյանի, Լիլիթ Մարտիկի Սերոբյանի, Լիլիթ Ռուբենի Հարությունյանի, Լիլյա Ռոմանի Երիցյանի, Լինա Մինասի Հայրապետյանի, Լուսինե Սանթուրի Սուլեյմանյանի, Կարեն Լևոնի Աղաջանյանի, Կիմա Մարտիկի Շահբազյանի, Կիմա Սպարտակի Ալեքսանյանի,

Հայկ Արեգի Բայանդուրի, Հերմինե Արմենի Ավագյանի, Հերմինե Հենրիկի Վահանյանի, Հրաչ Հրանտի Սալմասյանի, Ճորճ Լևոնի Պալըգճյանի, Մանե Վահրամի Թերզիկյանի, Մանվել Ալբերտի Քոչինյանի, Մարգարիտ Կոլյայի Հարությունյանի, Մարիամ Պետրիկի Մելքոնյանի, Մարինա Բորիսի Բեգլարյանի, Մերի Մելսիկի Գրիգորյանի, Միլենա Սուրենի Օհանյանի, Մինաս Սերոբի Հայրապետյանի, Միեր Զավենի Դանիելյանի, Յանա Էդվարդի Բաբայանի, Նաիրա Հրանտի Հովասափյանի, Նաիրա Մայիսի Մարգարյանի, Նանե Արտակի Ոսկանյանի, Նարեկ Նաիրիի Մանուկյանի, Նարինե Բորիսի Սարգսյանի, Նարինե Նորայրի Էլոյանի, Նունե Արտոյի Մարտիրոսյանի, Շաղիգ Մգրդիչի Մինասյանի, Շողիկ Ռաֆֆիի Ավետիսեանի, Շուշան Գրիգորի Թորոսյանի, Ռուզաննա Սուրենի Խաչատրյանի, Սամվել Արամայիսի Հայրումյանի, Սարիբեկ Սարգսի Սարգսյանի, Սեդա Արմենի Ոսկանյանի, Սերգեյ Ռոմանի Արշակյանի, Սևան Ռուբենի Օսկանյանի, Սիմոն Հենրիկի Հայրապետյանի, Սուսաննա Ռոբերտի Խաչատրյանի, Սրեղլա Լավրենտի Հարությունյանի, Վահագն Զորիկի Ղազարյանի, Վահե Աբրահամի Մարտիրոսյանի, Փաթիլ Վիգէնի Վարդանեանի, Քրիստինե Էդվարդի Ավանեսյանի կողմից «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲ ընկերությունում բացված «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության հաշվին փոխանցված ընդհանուր՝ առանձնապես խոշոր չափերի 85.389.695 ՀՀ դրամ գումարը (…)։

(…)

Բացի այդ, Կարինե Հակոբի Ավդալյանը, օգտվելով «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության նախագահը հանդիսանալու հանգամանքից, խարդախությամբ խոշոր չափերի գումար հափշտակելու միասնական հանցավոր մտադրությամբ, ստանձնած պարտավորությունը չկատարելու նախնական դիտավորությամբ հասարակական կազմակերպության անունից Իսպանիայի Թագավորությունում տեղի ունենալիք փառատոնին մասնակցելու համաձայնություն տված Ռամելլա Գրիգորիի Ղազարյանի, Արթուր Համբարձումյանի, Սերգեյ Համբարձումյանի հետ կնքել է պայմանագրեր՝ պարտավորվելով Ռամելլա Գրիգորիի Ղազարյանին, Արթուր Համբարձումյանին, Սերգեյ Համբարձումյանին, տեղափոխել Իսպանիայի

Թագավորություն, իսկ Հայաստանի Հանրապետություն վերադառնալուն պես հետ վերադարձնել պայմանագրով նախատեսված գումարները՝ այդ կերպ վերջիններիս մուր ստեղծելով գումարի հանձնման օրինականության պատրանք, պահանջել և Արթուր Համբարձումյանի կողմից 17.06.2019 թվականին «Վերածնունդ միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության հաշվին փոխանցված ընդհանուր 1,994.300 ՀՀ դրամը, Ռամելա Գրիգորի Ղազարյանի կողմից նույն հաշվեհամարին 17.06.2019 թվականին փոխանցված 700,700 ՀՀ դրամ գումարը (ընդհանուր՝ խոշոր չափերի 2.695.000 ՀՀ դրամ) հափշտակել է՝ ապօրինի և անհատույց ստացել՝ ունենալով այն տնօրինելու և տիրապետելու իրական հնարավորություն:

Բացի այդ, Կարինե Հակոբի Ավդալյանը, օգտվելով «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության նախագահը հանդիսանալու հանգամանքից, խարդախությամբ խոշոր չափերի գումար հափշտակելու միասնական հանցավոր մտադրությամբ, Իտալիայի Հանրապետությունում տեղի ունենալիք փառատոնին մասնակցելու համաձայնություն տված Կարեն Հակոբյանից, Արկադիա Նոնինյանից, Ռուման Սարաֆիկյանից պահանջել և ապօրինի, անհատույց, խարդախության եղանակով՝ խաբեությամբ և վերջիններիս վստահությունները չարաշահելու միջոցով օգտագործելով իր մտերիմ Գևորգ Լեոնիկի Նորոյանի և վրեջիններիս հարաբերությունները, ստացել՝ հափշտակել է՝ Կարեն Համլետի Հակոբյանի կողմից 02.05.2019 թվականին «Վերածնունդ միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության հաշվին փոխանցած 706.000 ՀՀ դրամ գումարը, Ռուման Գեորգիի Սարաֆիկյանի կողմից 30.04.2019 թվականին «Վերածնունդ միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության հաշվին փոխանցված 302.400 դրամ գումարը, 15.05.2019 թվականին Գևորգ Լեոնիկի Նորոյան հաշվին փոխանցված 708.450 դրամ գումարը, 08.05.2019 թվականին «Վերածնունդ միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության հաշվին փոխանցված 409.610 դրամ գումարը, 21.06.2019 թվականին «220155980331000» հաշվին փոխանցված 92.500 դրամ գումարը, Արկադիա Վոլոդյայի Նոնինյանի կողմից 29.04.2019 թվականին

«Վերածնունդ միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության հաշվեհամարին փոխանցված 702.000 դրամ գումարը, 21.06.2019 թվականին «220325980302000» հաշվին փոխանցված 46.500 ՀՀ դրամ գումարը (ընդհանուր՝ խոշոր չափերի 2.967.460 ՀՀ դրամ)՝ ունենալով այն տնօրինելու և տիրապետելու իրական հնարավորություն (…)»[1]:

Աշոտ Շմավոնի Պետրոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով և 46-256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ «*նա հանդիսանալով «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության փոխնախագահը, յուրացման եղանակով հափշտակության փաստը կոծկելու մտադրությամբ կեղծել է փաստաթղթեր՝ այդ կերպ նաև օժանդակելով «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության նախագահի՝ Կարինե Հակոբի Ավդալյանի կողմից ԱՊՀ հումանիտար համագործակցության միջպետական միջազգային հիմնադրամից «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպությանը փոխանցված 2.904.501,5 ՌԴ ռուբլի գումարից յուրացման եղանակով առանձնապես խոշոր չափերի 23.083.761 ՀՀ դրամ գումարը հափշտակելուն, մասնավորապես՝ Կարինե Հակոբի Ավդալյանի կողմից ԱՊՀ հումանիտար համագործակցության միջպետական միջազգային հիմնադրամից «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպությանը փոխանցված առանձնապես խոշոր չափերի 23.083.761 ՀՀ դրամ գումարը հափշտակելուն օժանդակելու նպատակով՝ կեղծել է՝ իր ստորագրությամբ հաստատել Կարինե Ավդալյանի և Արտյոմ Զաքարյանի կողմից «Արտյոմ Զաքարյան» անհատ ձեռներեցի կողմից առանց «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպությանը ծառայությունների իրական մատուցման վերաբերյալ կազմած կեղծ տվյալներ պարունակող փաստաթղթերը՝ ծառայությունների մատուցման հաշիվները, ակտերը՝ 10.678.000 ՀՀ դրամի չափով, 7.562.000 ՀՀ դրամի չափով, 8.930.000 ՀՀ դրամի չափով, այնուհետև իր ստորագրությամբ ստացել «Արտյոմ Զաքարյան»*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 50, թերթեր 101-113:

անհատ ձեռներեցին վճարում կատարված լինելու մասին անհատ ձեռներեցի կողմից կազմված կեղծ փվյալներ պարունակող անդորրագրերը, որոնք հատկացած միջոցների նպատակային ծախսումը հիմնավորելու նպատակով Կարինե Հակոբի Ավդալյանը դրել է շրջանառության մեջ՝ ուղարկելով ԱՊՀ հումանիտար համագործակցության միջպետական միջազգային հիմնադրամ»[2]:

5. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Քրեական գործի նյութերի, առաջին հերթին՝ մեղադրյալների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին կայացված որոշումների և մեղադրական եզրակացության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Կարինե Ավդալյանին, ի թիվս այլնի, ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով մեղադրանք է ներկայացվել իրեն մեղսագրվող՝ առանձնապես խոշոր չափերով վստահված գույքը հափշտակելու և խարդախության համար, որոնք կատարվել են իշխանական կամ ծառայողական լիազորություններր կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, որոնք ՀՀ քրեական օրենսգրքի «Հավելված N1»-ի համաձայն՝ ներառված են կոռուպցիոն հանցանքների ցանկում:*

(…) [Հ]աշվի առնելով, որ թիվ ՇԴ/0254/01/23 քրեական գործով նախնական դատաքննության ընթացքում պարզվել է քրեական վարույթը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը՝ դատարանը գտնում է, որ նշված վարույթը պետք է ըստ ընդդատության ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն դատարան (…)»[3]:

6. Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների բովանդակության ուսումնասիրության արդյունքում Դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից սույն քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկելու մասին 2023 թվականի նոյեմբերի 28-ին կայացված*

[2] Տե՛ս թիվ ՇԴ/0017/01/22 քրեական վարույթը, հատոր 50, թերթեր 219-220:
[3] Տե՛ս թիվ ՇԴ/0017/01/22 քրեական վարույթը, հատոր 53, թերթեր 16-34:

որոշմամբ արտահայտված այն դիրքորոշմանը, որ քրեական գործի նյութերի, առաջին հերթին՝ մեղադրյալների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին կայացված որոշումների և մեղադրական եզրակացության ուսումնասիրությամբ պարզվել է, որ Կարինե Ավդալյանին ի թիվս այլնի ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով մեղադրանք է ներկայացվել իրեն մեղսագրվող՝ առանձնապես խոշոր չափերով վստահված գույքը հափշտակելու և խարդախության համար, որոնք կատարվել են իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Դատարանի վերը նշված անհամաձայնության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ Կարինե Ավդալյանին ներկայացված մեղադրանքի որևէ դրվագով (այդ թվում ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով) առկա չէ որևէ ձևակերպում առ այն, որ Կարինե Ավդալյանն իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքները կատարել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, մինչդեռ Դատարանը պարտավոր է վարույթի քննությունն իրականացնել անձին ներկայացված մեղադրանքի սահմաններում:

Ավելին, Դատարանն արձանագրում է, որ Կարինե Ավդալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ներկայացված մեղադրանքի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ դրանցով նկարագրված ենթադրյալ հանցանքները կատարվել են Կարինե Ավդալյանի այն նույն կարգավիճակի և նույն լիազորությունների շրջանակներում, որոնք նկարագրված են ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքներում: Դատարանի գնահատմամբ Կարինե Ավդալյանին ենթադրյալ արարքները իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարում մեղսագրվելու պարագայում վերջինիս մեղադրանք կներկայացվեր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով,

այլ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0275/01/23 (ՇԴ/0254/01/23) քրեական վարույթը ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին՝ հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանք(ներ)ի վերաբերյալ վարույթ չէ (...)»[4]:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0275/01/23 (ՇԴ/0254/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «*օրենքի հիման վրա ստեղծված դատարան*» հասկացությունը մեկնաբանելիս նշել է. «*Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի*

[4] Տե՛ս թիվ ՇԴ/0017/01/22 քրեական վարույթը, հատոր 54, թերթեր 82-84:

նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

10. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հատակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]:

11. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»*:

13. ՀՀ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ անմիջականորեն գործող պաշտպանության իրավունքի երաշխավորման նպատակով դատարաններն ամբաստանյալի նկատմամբ գործի քննության ընթացքում չեն կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքների շրջանակից: Ավելին՝ դատարանը՝ որպես արդարադատություն և ոչ թե քրեական հետապնդում իրականացնող մարմին, սահմանափակված է ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ծավալով:

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

Այսինքն՝ քրեական գործի քննության ընթացքում դատարանը չի կարող քննարկման առարկա դարձնել այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք արտացոլված չեն եղել անձին առաջադրված մեղադրանքում[8]:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ Կ.Ավդալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով մեղսագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Կոռուպցիոն հանցանքների ցանկ» N 1 հավելվածով սահմանված՝ «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու» հատկանիշը, որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին[9]:

- Հակակոռուպցիոն դատարանը, նշելով, որ Կ.Ավդալյանին ներկայացված մեղադրանքում առկա չէ որևէ ձևակերպում առ այն, որ վերջինս իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքները կատարել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, գտել է, որ քրեական վարույթն ընդդատյա չէ հակակոռուպցիոն դատարանին:

Հակակոռուպցիոն դատարանն արձանագրել է նաև, որ «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու» հատկանիշը Կ.Ավդալյանին մեղսագրելու պարագայում, վերջինիս մեղադրանք կներկայացվեր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով[10]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ

---

[8] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Կարեն Կունգուրցևի* գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԼԴ/0141/01/14 որոշումը:

[9] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

[10] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Կ.Ավդալյանին ներկայացված մեղադրանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքներով, ՀՀ քրեական օրենսգրքի «Կոռուպցիոն հանցանքների ցանկ» N 1 հավելվածով սահմանված՝ «***իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու***» հատկանիշը Կ.Ավդալյանին չի մեղսագրվել:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ Կ.Ավդալյանին մեղադրանք է ներկայացվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, այն է՝ խոշոր չափերով խարդախության և խոշոր չափերով վստահված գույքը հափշտակելու համար: Այլ կերպ՝ ***«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու»*** հատկանիշը՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Կ.Ավդալյանին չի մեղսագրվել: Մինչդեռ, ինչպես նշել է Հակակոռուպցիոն դատարանը, վերոնշյալ ենթադրյալ հանցավոր արարքները Կ.Ավդալյանի կողմից կատարվել են նույն կարգավիճակի և լիազորությունների շրջանակներում, որոնք նկարագրվել են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքներում:

Հետևաբար գտնում եմ, որ Կ.Ավդալյանին ներկայացված մեղադրանքների ձևակերպման պայմաններում, սույն վարույթը Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու իրավական հիմքը բացակայում է:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՇԴ/0254/01/23 (ՀԿԴ/0275/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր չէ:

17. Հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասը՝ գտնում եմ, որ թիվ ՀԿԴ/0275/01/23 (ՇԴ/0254/01/23) քրեական

վարույթն ընդդատյա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կարինե Հակոբի Ավդալյանի վերաբերյալ երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և Աշոտ Շմավոնի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով և 46-256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով թիվ ՀԿԴ/0275/01/23 (ՇԴ/0254/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ